ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՁՈՐԱԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ Լոռու մարզպետ

պարոն Ա. Խաչատրյանին

28. 12. 2020թ

N - 293

Կից Ձեզ եմ ներկայացնում Ձորագյուղ համայնքի ավագանու 2020թ-ի դեկեմբերի 25-ի թիվ 21-Ա և 26-Ա որոշումները:

Առդիր՝ 18 էջ:

Համայնքի ղեկավար Ա. Ռամազյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԶՈՐԱԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Զորագյուղ համայնք
ՀՀ Լոռու մարզ, գ. Զորագյուղ, dzoragyugh.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 դեկտեմբերի 2020 թվականի N 21-Ա

ԶՈՐԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 Թ-Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ և մասով՝ Զորագյուղ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Զորագյուղ համայնքի ավագաու 2020 թ-ի դեկտեմբերի 25-ի հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ՝	Դեմ՝	Ձեռնպահ՝
Ռուզաննա Հարությունյան			
Վալոդյա Հովսեփյան			
Վահրամ Հովսեփյան			
Արտակ Հովհաննիսյան			

Համայնքի ղեկավարի ..... Ա. Ռամազյան

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագյուղ համայնքի ավագանու
2020 թվականի դեկտեմբերի 25-ի N 21-Ա որոշման

ՕՐԱԿԱՐԳ

ՁՈՐԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 Թ-Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

1. ՁՈՐԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 Թ-Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳՅՈՒՂ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3. 2021 Թ_Ի ՀԱՄԱՐ ՁՈՐԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4. ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳՅՈՒՂ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 Թ_Ի ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4. ՁՈՐԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 03.03.2020 Թ-Ի ԹԻՎ 06-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5. ՁՈՐԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 05.08.2020Թ-Ի ԹԻՎ 15-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավար՝ ..... Ա. Ռամազյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՁՈՐԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագյուղ համայնք
ՀՀ Լոռու մարզ, գ. Ձորագյուղ, dzoragyugh.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 դեկտեմբերի 2020 թվականի N 22-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳՅՈՒՂ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ և 19-րդ կետերով, «Տեղական տուրքերի և վճարների մասի» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ,9-րդ, 10-րդ, 11-րդ,12-րդ,13-րդ,14-րդ հոդվածներով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ կետով՝ Ձորագյուղ գյուղական համայնքի ավագանին

որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագյուղ գյուղական համայնքում 2021 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ	*կողմ*	*դեմ*	*ձեռնպահ*
Հարությունյան Ռուզաննա			
Հովսեփյան Վալոդյա			
Հովսեփյան Վահրամ			
Հովհաննիսյան Արտակ			

Համայնքի ղեկավար՝ Ա.Ռամազյան

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Զորագյուղ համայնքի ավագանու
2020 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 22 -Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԶՈՐԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ **յոթ հազար հինգ հարյուր դրամ,**

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **տասնհինգ հազար դրամ,**
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **քսանհինգ հազար դրամ,**
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **քսանհինգ հազար դրամ,**
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **հիսուն հազար դրամ.**

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **հազար հինգ հարյուր դրամ**
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **երկու հազար հինգ հարյուր դրամ.**

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ **1500 դրամ,**

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ 2500 դրամ

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 60.000. դրամ

5) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կողեզրում՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 30.000 դրամ

6) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 18000.

7) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 6000. դրամ

8) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 25000. դրամ

9) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000, դրամ

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 5000դրամ

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝10.000, դրամ

200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝12500 դրամ

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 22500 դրամ

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար մեկ դրամից 50.000. դրամ

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝3000 դրամ

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝4000 դրամ

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝6000 դրամ

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7500դրամ

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13000 դրամ

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝30.000

10) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 175 դրամ մեկ քառակուսի մետրի համար.

11) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար

ա. առևտրի օբյեկտների համար՝ հինգ հազարից մինչև 25000դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝50.000,դրամ

գ. բաղնիքների (սաունաների) համար 250.000 դրամ

դ. խաղատների համար՝ 500.000 դրամ

ե. շահումով խաղերի համար250.000 դրամ

զ. վիճակախաղերի համար՝75000 դրամ

12) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝1500 դրամ

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 դրամ

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 4500 դրամ՝

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000 դրամ

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 9000 դրամ

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 դրամ

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 300 դրամ

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 600 դրամ

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1200 դրամ

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2400 դրամ

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4500 դրամ

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝7500 դրամ

13) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **1000 դրամ**

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **1750 դրամ**

գ. սոցիալական գովազդի համար՝ **0** դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ **750 դրամ**

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

14) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **30.000 դրամ**

15) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ **3000 դրամ**

16) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **150.000 դրամ**

17) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **1250000 դրամ**

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **2500000դրամ**

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝**3500000դրամ**

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝**5000000 դրամ**

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝**5000** դրամ,

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **5000** դրամ,

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝**3000**դրամ,

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝1000 դրամ,

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝2000դրամ,

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝2000 դրամ,

7) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը՝

ա.կենցաղային աղբի համար՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար վճար՝ ամսական 100 դրամ,

բ. ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 2000 դրամ,

8) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճար՝ ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի մեկ խորանարդ մետր համար սահմանված դրույքաչափի 20 %-ի չափով՝ 400 դրամ,

9) ջրմուղ-կոյուղու համար այն համայնքներում, որոնք ներառված չեն ջրմուղ-կոյուղու ծառայություններ մատուցող օպերատոր կազմակերպությունների սպասարկման տարածքներում, մասնավորապես **ջրամատակարարման և ջրահեռացման վճարներ՝** համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի.

10) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով.

11) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ 500 **դրամ** փոխհատուցման վճար:

12) համայնքում գործող կերաղացի սպասարկման համար՝ մեկ կգ –ի համար 10 դրամ

13) համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափ՝ մեկ պայմանական միավոր անասունի համար ամսեկան կազմում է

ա. Կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն՝ 5000 դրամ:

բ. Ծննդօգնություն

1. թեթև միջամտություն՝ 1000 դրամ

2. ծանր միջամտություն՝ 5000 դրամ

գ. Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում՝ կախված կենդանու տեսակից (բացառությամբ՝ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների)՝ մանր եղջերավոր կենդանիների համար՝ 100 դրամ, խոշոր եղջերավոր կենդանիներ համար՝ 200 դրամ:

դ. Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար՝ 200 դրամ :

ե. Ախտահանություն՝ մեկ քառ. մետրի համար 200 դրամ:

զ. Միջատազերծում (դեզինսեկցիա)՝ մեկ քառ. մետրի համար 100 դրամ:

է. Կրծողների ոչնչացում (դեռատիզացիա)՝ մեկ քառ. մետրի համար 200 դրամ:

ը. Արհեստական սերմնավորում՝ 5000 դրամ:

թ. Կենդանու հերձում՝ մանր եղջերավոր կենդանիների համար՝ 1000 դրամ, խոշոր եղջերավոր կենդանիներ համար՝ 3000 դրամ:

ժ. Կենդանու բուժում՝ կախված հիվանդության տեսակից և կենդանու տեսակից՝ յուրաքանչյուր այցելությունը 1000 դրամ:

ժա. Կենդանիների նախասպանդային զննում՝ կախված կենդանու տեսակից՝ մանր եղջերավոր կենդանիների համար՝ 1000 դրամ, խոշոր եղջերավոր կենդանիներ համար՝ 2000 դրամ:

ժբ. Կենդանիների հետսպանդային զննում՝ մանր եղջերավոր կենդանիների համար՝ 1000 դրամ, խոշոր եղջերավոր կենդանիներ համար՝ 2000 դրամ:

Համայնքի ղեկավար՝ Ա. Ռամազյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԶՈՐԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Զորագյուղ համայնք, հասցե 8-րդ փողոց, 6-րդ շենք
հեռախոս 077213407, էլ. փոստ dzoragyugh.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

« 25 » դեկտեմբերի 2020 թվականի N23-Ա

2021 Թ_Ի ՀԱՄԱՐ ԶՈՐԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 –րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 28 -րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին >> ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետով և 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Զորագյուղ համայնքի ավագանին

որոշում է.

1. Հաստատել 2021թ-ի համար Զորագյուղ համայնքի ղեկավարի, համայնքապետարանի աշխատակզմի աշխատակիցների, թվաքանակը , հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի :
2. Ուժը կորցրած ճանաչել Զորագյուղ համայնքի ավագանու 2019թ.-ի դեկտեմբերի 26-ի <<2020թ.-ի համար Զորագյուղ համայնքի ղեկավարի, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, համայնքի նախակրթարանի (ՀՈԱԿ) աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 35-Ա որոշումը :

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ՝	Դեմ՝	Ձեռնպահ՝
Ռուզաննա Հարությունյան			
Վալոդյա Հովսեփյան			
Վահրամ Հովսեփյան			
Արտակ Հովհաննիսյան			

Համայնքի ղեկավար՝ ..... Ա. Ռամազյան

Հավելված
ՁՈՐԱԳՅՈՒՂ համայնքի ավագանու
2020 թվականի դեկտեմբերի 25-ի N 23 -Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 5

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀ ԴՐԱՄ/
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
Համայնքի ղեկավար	1	120000
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	89611
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
Աշխատակազմի քարտուղար	1	94000
Աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ	1	93000
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ		
Հավաքարար	0.5	46330
ԸՆԴԱՄԵՆԸ	4.5	442941

Համայնքի ղեկավար՝ ..... Ա. Ռամազյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՁՈՐԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագյուղ համայնք
ՀՀ Լոռու մարզ, գ. Ձորագյուղ, dzoragyugh.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

25 դեկտեմբերի 2020 թվականի N 24 -Ն

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳՅՈՒՂ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 Թ_Ի ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և « Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ կետով՝ Ձորագյուղ համայնքի ավագանին

որոշում է.

Հաստատել Ձորագյուղ համայնքի 2021թ-ի բյուջեն՝ համաձայն հավելվածների :

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ՝	Դեմ՝	Ձեռնպահ՝
Ռուզաննա Հարությունյան			
Վալոդյա Հովսեփյան			
Վահրամ Հովսեփյան			
Արտակ Հովհաննիսյան			

Համայնքի ղեկավար Ա. Ռամազնյան

Հավելված
Զորագյուղ համայնքի ավագանու
2020 թվականի դեկտեմբերի 25-ի
N 24-Ն որոշման
(հազար դրա

ՀՀ	Եկամտատեսակները	Ընդամենը	այդ թվում՝	
			վարչական մաս	ֆոնդային մաս
1	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	9225.5	9225.5	0.0
1.1	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	4513.5	4513.5	x
1.1.2	Գույքային հարկեր անշարժ գույքից	3296.5	3296.5	X
1.1.3	Գույքահարկ համ. վարչ. տարածքում գտնվող շենքերի եւ շինությունների համար	2.0	2.0	X
1.1.4	Հողի հարկ համայնքների վարչ. տարածքում գտնվող հողերի համար	3294.2	3294.2	X
1.1.5	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	1181.0	1181.0	X
1.1.6	Համայնքի տարածքում ոգելիչ խմիչք. եւ(կամ) ծխախոտի արտադ. կամ վաճ., իսկ հանր. սննդի օբյեկտ.՝ ոգելիչ խմիչք. եւ(կամ) ծխախոտի արտադ. իրացման թույլտվության համար	36.0	36.0	X
1.2	ՊԵՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	4170.4	4170.4	X
1.2.1	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	4170.4	4170.4	X
1.3	ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	541.6	541.6	x
1.3.1	Գույքի վարձակալությունից մուտքեր	221.6	221.6	X
1.3.2	Համայնքի սեփականություն հանդիսացող հողերի վարձ.	181.5	181.5	X
1.3.3	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր	40.0	40.0	X
1.4	ՎԱՐՉԱԿԱՆ ԳԱՆՁՈՒՄՆԵՐ	320.0	320.0	X
1.4.1	Տեղական վճարներ	320.0	320.0	X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՌԱՄԱԶՅԱՆ

Հավելված
Ջորագյուղ համայնքի ավագանու
2020 թվականի դեկտեմբերի 25-ի
N 24-Ն որոշման

(հազար դրամ)

ՀՀ	Ծախսեր	Հոդ.	Ընդամենը	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	X	5225.5	9225.5	0
1.1	ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ	X	9225.5	9225.5	0
1.1.1	Աշխատանքի վարձատրություն	X	5700.0	5700.0	0
1.1.2	Աշխատողների աշխատավարձեր եւ հավելավճարներ	4111	5500.0	5500.0	X
1.1.3	Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ ու	4112	200.0	200.0	X
2	ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ	X	1530.4	1530.4	X
	ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ	X	590.4	590.4	x
2.2.1	Էներգետիկ ծառայություններ	4212	490.4	490.4	X
2.2.2	Կապի ծառայություններ	4214	100.0	100.0	X
2.3	ԳՈՐԾՈՂՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐ	X	100.0	100.0	X
2.3.1	Ներքին գործուղումներ	4241	100.0	100.0	x
2.4	ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ	X	350.0	350.0	X
2.4.1	Տեղեկատվական ծառայություններ	4234	8.0	8.0	X
2.4.2	Համակարգչային ծառայություններ	4232	92.0	92.0	X
2.4.3	Ընդհանուր բնույթի այլ ծառաություններ	4239	250.0	250.0	X
2.5	ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ	X	50.0	50.0	X
2.5.1	Մեքենաների և սարքավորումների ընթացիք նորոգում և պահպանում	4252	50.0	50.0	X
2.6	ԱՅԼ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ	x	320.0	320.0	X
2.6.1	Մասնագիտական ծառայություններ	4241	320.0	320.0	x
2.7	ՆՅՈՒԹԵՐ	X	120.0	120.0	X
2.7.1	Գրասենյակային նյութեր եւ հագուստ	4261	100.0	100.0	X
2.7.2	Առողջապահական և լաբարատոր նյութեր	4266	20.0	20.0	X
2.7	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ	X	150.0	150.0	X
	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՌՏԱՀԱՅՏՄԱԲ ՆՊԱՍՏՆԵՐ(ԲՅՈՒՋԵԻՑ)	X	150.0	150.0	X
2.7.1	Այլ նպաստներ բյուջեից	4729	150.0	150.0	X
2.8	ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ	X	1845.1	1845.1	0.0
2.8.1	Պահուստային միջոցներ	4891	1845.1	1845.1	0.0
2.9	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ	X	0.0	X	0.0
	ՀԻՄԱՆԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	X	0.0	X	0.0
2.9.2	ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	X	0.0	X	0.0
	Շենքերի եւ շինությունների կապիտալ վերանորոգում	5113	0.0	X	0.0
2.9.3	ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ	X	0.0	X	0.0
	Վարչական սարքավորումներ	5122	.0.0	X	.0.0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՌԱՄԱԶՅԱՆ

Հավելված
Զորագյուղ համայնքի ավագանու
2020 թվականի դեկտեմբերի 25-ի
N 24-Ն որոշման

(հազար դրամներով)

ՀՀ		Հոդ.	Ընդամենը	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
2.14	ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՎԵԼՈՒՐԴԸ ԿԱՄ ԴԵՖԻՑԻՏԸ (ՊԱԿԱՍՈՒՐԴԸ)	X	0	0	0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՌԱՄԱԶՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԶՈՐԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Զորագյուղ համայնք, հասցե 8-րդ փողոց, 6-րդ շենք
հեռախոս 077213407, էլ. փոստ dzoragyugh.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

« 25 » դեկտեմբերի 2020 թվականի N 25-Ա

ԶՈՐԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 03.03.2020 Թ-Ի ԹԻՎ 06-Ա ՈՐՈՇՈՒՄԸ

ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության « Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝ Զորագյուղ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

Ուժը կորցրած ճանաչել Զորագյուղ համայնքի ավագանու 2020թ-ի մարտի 03-ի << << Զորագյուղի նախակրթարան >> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու մասին>> թիվ 06-Ա որոշումը:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ՝	Դեմ՝	Ձեռնպահ՝
Ռուզաննա Հարությունյան			
Վալոդյա Հովսեփյան			
Վահրամ Հովսեփյան			
Արտակ Հովհաննիսյան			

Համայնքի ղեկավար՝ ..... Ա. Ռամազյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԶՈՐԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Զորագյուղ համայնք, հասցե 8-րդ փողոց, 6-րդ շենք
հեռախոս 077213407, էլ. փոստ dzoragyugh.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

« 25 » դեկտեմբերի 2020 թվականի N 26 -Ա

ԶՈՐԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 05.08.2020Թ-Ի ԹԻՎ 15-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Քաղաքացիական օրենսգրքի>> 67-րդ, 68-րդ և 69-րդ հոդվածներով, << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 –րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով,<<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածով , « Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով, 34 –րդ , 36-րդ և 37-րդ հոդվածներով՝ Զորագյուղ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հաշվի առնելով, որ համայնքը << Զորագյուղի նախակրթարան>> ՀՈԱԿ-ին ս/թ-ի ապրիլ –օգոստոս ամիսների գործունեության համար՝ ունի 450015 (չորս հարյուր հիսուն հազար տասն հինգ) ՀՀ դրամ աշխատավարձի պարտք, համայնքի անասնաբուժի ծառայությունների մատուցման ս/թ փետրվար-հուլի ամիսների՝ 150000 (հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ աշխատավարձի պարտք, համայնքապետարանի աշխատակազմի հուլիս ամսվա՝ 483297(չորս հարյուր ութսուն երեք հազար երկու հարյուր ինսուն յոթ) ՀՀ դրամ աշխատավարձի պարտք , ընդամենը՝1083312 (մեկ միլիոն ութսուներեք հազար երեք հարյուր տասներկու) ՀՀ դրամ:

2. Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ համաճարակային պայմաններում հնարավոր չէ ապահովել սանիտարական հակահամաճարակային նորմերը, նախակրթարանը չի գործում: Երեխաների թիվը բավականին նվազել է՝ 2019թ-ին հաճախողները եղել են 19-ը, սակայն ս/թ-ի սեպտեմբեր ամսից կդառնա 9-ը:

3. Ս/թ-ի հոկտեմբերի 04-ից << Զորագյուղի նախակրթարան>> ՀՈԱԿ-ը լուծարել:

4. Ուժը կորցրած ճանաչել Զորագյուղ համայնքի ավագանու 2010թ-ի օգոստոսի 19-ի << Համայնքում ՀՈԱԿ-Ի նախակրթարան բացելու մասին >> թիվ 16-Ա որոշումը

5. Ստեղծել լուծարային հանձնաժողով՝ հետևյալ կազմով

5.1 հանձնաժողովի նախագահ՝
Արշակ Ռամազյան - Զորագյուղ համայնքի ղեկավար

հանձնաժողովի անդամներ՝

5.2 Լիլի Հովհաննիսյան - Զորագյուղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար

5.3 Հասմիկ Խաչատրյան - Զորագյուղի ՀՈԱԿ-ի տնօրենի ժ/պ
5.4 Ռուզաննա Հարությունյան - Զորագյուղ համայնքի ավագանու անդամ
5.5 Արտակ Հովհաննիսյան - Զորագյուղ համայնքի ավագանու անդամ
5.6 Բախշիկ Հարությունյան - Զորագյուղի համայնքապետարանի առաջատար մասնագետ - հաշվապահ

6. Լուծարային հանձնաժողովին՝ երկամսյա ժամկետում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ավարտել կազմակերպության լուծարման գործընթացը:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ՝	Դեմ՝	Ձեռնպահ՝
Ռուզաննա Հարությունյան			
Վալոդյա Հովսեփյան			
Վահրամ Հովսեփյան			
Արտակ Հովհաննիսյան			

Համայնքի ղեկավար՝ ..... Ա. Ռամազյան